Քիչ մը ետքը լոմպարտական-վենետական թագաւորութեան, Գարինթիայի, Գառնիոլիայի եւ ծովեզերեայ երկիրներուն՝ զինուորական ճարտարապետութեան վերատեսուչ հսկող անուանուեցաւ։ Ասոր վրայ, Վերոնայի մէջ՝ հանճարագիտութեան վաշտապետ (Brigadier) — ու 1857ին ճարտարապետութեան կաճառին զօրապետ (General) անուանուեցաւ։ — —

Մալինեան Ֆրանգֆուրդի մէջ ամուսնացաւ։ Երեք որդի եւ երկու դուստր ունեցաւ։ Որդիքը՝ զինուորական վիճակի մէջ մնան։ Մէկն — Աւգոստինոս — ասպետ, կայսերական թագաւորական հարիւրապետ, Վիեննայի քով եղած Նայշդադի մէջ, զինուորական ակադեմիայի ուսուցիչ, ու լաւ նկարիչ էր։ Մաճէնդայի եւ Սոլֆերինոյի ճակատներու վրայօք յօրինած նկարներն, ինչպէս կ'ըսուի, իր վեհափառութեանը սրահները կը զարդարեն։ Եղբէն շատ բարձրացաւ զինուորական աստիճանին մէջ։ Կրտսերը՝ Կարոլոս, իբրեւ հազարապետի փոխանորդ, ի հանգստեան, մինչեւ 1883, նոյնպէս Վինէր-Նայշդատ կը բնակէր։

Մալինեանի յանկարծական մահը՝ հանդիպեցաւ 1858 աւգ. 9ին, Վիչէնցա գաւառին՝ Ռէգօարօ բաղնիքին մէջ. այնպիսի հասակին, ուր որ մարդկային հաշուին նայելով՝ դեռ տասնեակներ կրնար ապրիլ ու գործունեայ կեանք արտադրել։ Երեք տեղակալ որդին բոլորեց իր դամբանը՝ — այն պատուաւոր ու արժանիքներով հարուստ հօր, որուն մնացական արդիւնքները կը ճանչնան, ոչ միայն զինուորական կարգն, որուն կը վերաբերէր, հապա նաեւ բոլոր երկիրը։

Չկայ անանկ ապահով վիճակ մը ինչպէս զինուորականն, որ պհասարակ զինուորն անգամ՝ միայն իր քաջութեանն ու հաւատարիմ ծառայութեանը համար, փառաց այն աստիճանին հասցընէ։ Ուր որ մարդ՝ իր ծերութեան օրերուն մէջ, երբ ալ գործելու անատակ է, հանգստեան ու պատուոյ մէջ կրնայ ապրիլ։

Հայաքաղքի խորհրդականին որդին, աս նախանձելի վիճակն ընտրեց. եւ իր արտաքոյ կարգի փութաջանութեամբն ու կարողութեամբը, չէ թէ միայն Մալինեան մեծ գերդաստանին, հապա միանգամայն Գրանսիլուանիայի ազգայնոց ուրախութիւն ու փառք բերաւ։

dienst; wie er überhaupt unter den Berufenen einer der Berufensten gewesen, welche den Ruhm seiner Waffe glänzend zu vertreten verstanden haben.

# ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

## ԱՐԱԲԱՑԻ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

### *Տաբարի:*[1]

(Շարունակութիւն։)

24 թ. Օսման հրամայեց Մուավիային՝ ուղարկել Հաբիբ ի. Մասլամային Ասորիքի ժողովրդի հետ Հայաստան. Մուավիայ կատարեց նորա հրամանն։ Հաբիբ՝ լուր առնելով, որ յոյն Մավրիանը 80.000 յոյն եւ թուրք զօրքով նորա դէմ է գալիս, գրեց այս բանի մասին Մուավիային, սա տեղեկացրեց Օսմանին, իսկ Օսման գրեց Սայիդ ի. Ալասին, հրամայելով նորան օգնել Հաբիբ ի. Մասլամային. Սայիդ ուղարկեց Սալման ի. Ռաբիային 6000 մարդ։

31 թ. Հաբիբ ի. Մասլամայ Փիհրի նուաճեց Հայաստան՝ ըստ Վակիդիի աւանդութեան։

32 թ. Սայիդ ի. Ալաս նշանակեց Սալման ի. Ռաբիային Բալանջարի սահմանագլխի վերայ, տալով նորան օգնական գունդ Հուզայֆայի առաջնորդութեամբ եւ մի այլ գունդ Ասորիքի ժողովրդից բաղկացած՝ Հաբիբ ի. Մասլամայ Փիհրիի հրամանատարութեան ներքոյ։

Օսման գրեց Սայիդին՝ ուղարկել Սալմանին Բաբ (Դարբանդ), իսկ Աբդուլռահման ի. Ռաբիային (որ Բաբի հանդէպ կը գտնուէր) հրամայեց այնտեղից հեռանալ. սակայն նա չհեռացաւ Բալանջարից, այլ Օսմանի ամիրապետութեան թ. թւին եկաւ պաշարեց Բալանջար, քաղաքի առջեւ դնելով մաջանիք եւ արրադաթ (քարանետ) մեքենաները, այնպէս որ ոչ ոք չէր կարող մօտենալ առանց վնասուելու կամ սպանուելու։ Թուրքերի նշանակած օրը Բալանջարի բնակիչք դուրս եկան քաղաքից, որոնց հետ միանալով թուրքերը ճակատեցան. Աբդուլռահման ի. Ռաբիայ, որ Զուլնուր կը կոչուէր, սպանուեցաւ, իսկ մուսլիմները փախստեամբ ցրուեցան զանազան կողմեր։

66 թ. Մուխտար գրեց Աբդուլլահ ի. Հարազին կառավարիչ Հայաստանի վերայ։

67 թ. Մուսաբ ուղարկեց Մոհալլաբ ի. Աբու Սաֆարին կառավարիչ Մուսիլի, Միջագետքի, Ատրպատականի եւ Հայաստանի վերայ։

73 թ. Օսման ի. Վալիդ չորս հազար զօրքով յարձակեցաւ Յունաց վերայ Հայաստանի սահմաններում եւ՝ թէեւ Յոյները 60.000 էին՝ հալածեց նոցա եւ կոտորեց նոցանից մեծ բազմութիւն։

81 թ. Աբդուլմալիք ուղարկեց իւր որդի Օբայդալլահին, որ առաւ Կարին։

90 թ. Մասլամայ ի. Աբդուլմալիք արշաւեց Թուրքերի վերայ եւ՝ հասնելով Բաբ Ատրպատականի նահանգում՝ առաւ երկրի բերդերը եւ քաղաքները։ Նոյն արշաւանքն նա կրկնեց հետեւեալ տարի։

90 թ. Աբբաս ի. Վալիդ ասպատակեց Յունաց երկիրը, հասնելով մինչեւ Արզն։

[1] Տես «Հանդէս» 1905 NN. 8—9 էջ 244—245։

digitised by A.R.A.R.@

98 Թ. Սուլէյման արշաւեց Ցունաստան եւ բանակեցաւ Դաբիքում,[1] առաջ ուղարկելով Մասլամային. Ցոյները՝ աՀաբեկ լինելով՝ Հեռացան Հայաստանից։

99 Թ. Թուրքերը արշաւեցին Ատրպատական եւ սպանեցին մուսլիմներից մեծ բազմութիւն։

102 Թ. Օմար ի. Հուբայր յարձակեցաւ Ցունաց վերայ Հայաստանի սաՀմաններում, Հալածեց նոցա եւ գերեց նոցանից մեծ բազմութիւն։

104 Թ. ՋարրաՀ ի. ԱբդուլլաՀ Հակամի՝ Հայաստանի եւ Ատրպատականի կուսակալը՝ արշաւեց Թուրքաց երկիրը, նուաճեց Բալանջար եւ նորա ամրոցները, Հալածեց Թուրքերին եւ նետեց նոցա ծովը, գաղթեցնելով բնակիչների մի մասը։

105 Թ. ՋարրաՀ արշաւեց Ալանաց վերայ, Հասնելով մինչեւ Բալանջարի մօտ գտնուող քաղաքները եւ բերդերը, որոնցից մի քանիսը նա նուաճեց եւ գաղթեցրեց բնակիչների մի մասը։

106 Թ. Հաջջաջ ի. Աբդուլմալիք արշաւեց Ալանաց վերայ, որոնք Հպատակեցան նորան Հարկ տալու Հիման վերայ։

110 Թ. Մասլամայ ի. Աբդուլմալիք արշաւեց Թուրքերի վերայ։ Անցնելով Ալանաց Դռնից, նա պատաՀեցաւ խաքանին եւ՝ չնայելով նորա զօրքի բազմութեանն՝ պատերազմեցաւ նորա Հետ գրեթէ մի ամիս. Աստուած ի փախուստ դարձրեց խաքանին։

111 Թ. Թուրքերը արշաւեցին Ատրպատական, սակայն Հարաղ ի. Ամր յետ մղեց նոցա։

111 Թ. Հիշամ նշանակեց ՋարրաՀ ի. ԱբդուլլաՀ Հակամիին կառավարիչ Հայաստանի վերայ։

112 Թ. Թուրքերը ներս խուժեցին Ալանաց Դռնից։ ՋարրաՀ ի. ԱբդուլլաՀ Հակամի Ասորիքի եւ Ատրպատականի ժողովրդից բաղկացած գնդով՝ թէեւ թւով ոչ լիակատար՝ ճակատեցաւ նոցա Հետ եւ նաՀատակեցաւ իւրայիններով Արտաւիլի դաշտում։ Նորա տեղ կառավարեց նորա եղբայր Հաջջաջ ի. ԱբդուլլաՀ Հայաստանի վերայ։

113 Թ. Մասլամայ ի. Աբդուլմալիք նուաճեց խաքանի իշխանութեան տակ գտնուող քաղաքները եւ բերդերը, ոմանց սպանեց, ոմանց գերեց։

115 Թ. Հիշամ դրեց Մրրուան ի. ՄուՀամմեդին կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։

117 Թ. Մրրուան ի. ՄուՀամմեդ, Հայաստանի կուսակալը, ուղարկեց մի զօրագունդ Ալանաց երկիրը, որ առաւ երեք բերդեր, եւ մի այլ՝ ՏումանշաՀի երկիրը, որի բնակիչք Հնազանդեցան։

132 Թ. Խազանի բնակիչք խուռն բազմութեամբ քարկոծեցին Սայիդ ի. Հիշամին, ՍուրաՀիլ ի. Մասլամայ ի. Աբդուլմալիքին, Աբդուլմալիք ի. Բիշր Տաղլաբիին եւ Չորրորդ Հայոց իշխան Կուշանին։[2]

132 Թ. Աբու Աբբաս դրեց իւր եղբայր Աբու Ջաֆարին Միջագետքի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ կուսակալ։

132 Թ. Միջագետք, Հայաստան եւ Ատրպատական կ'կառավարէր ԱբդուլլաՀ ի. ՄուՀամմեդ։[1]

133 Թ. Հայաստանի կառավարիչն էր ՍալՀ ի. ՍուբայՀ։

134 Թ. Ջաֆար Հեռացրեց ՍալՀ ի. ՍուբայՀին իւր պաշտօնից եւ նորա տեղ նշանակեց Եզիդ ի. Ուսայդին։

135 Թ. Հայաստան կը կառավարէր Եզիդ ի. Ուսայդ։

137 Թ. Հայաստանի կառավարիչն էր Հասան ի. ՔաՀթաբ։

145 Թ. Բաբ-էլ-աբուաբի Թուրքերը եւ Խազարները արշաւեցին Բաբից Հայաստան եւ կոտորեցին մուսլիմներից մեծ բազմութիւն։

147 Թ. Աստարխան Խուարազմին արշաւեց Թուրքերի բազմութեամբ Հայաստանի սաՀմաններում ապրող մուսլիմների վերայ, գերեց նոցանից եւ քրիստոնեաներից մեծ բազմութիւն, մտաւ Տփղիս եւ սպանեց Հարբ ի. ԱբդուլլաՀ Ռավանդիին։

148 Թ. Մանսուր ամիրապետը ուղարկեց Հումիդ ի. ՔաՀթաբին Հայաստան պատերազմելու Թուրքերի Հետ, որոնք սպանել էին Հարբ ի. ԱբդուլլաՀին եւ աւերել Տփղիս. ի. ՔաՀթաց եկաւ Հայաստան եւ վերայ Հասաւ այն ժամանակ, երբ Թուրքերը իրանց ուղտերը կը բառնային, եւ որի մտանեց բոլորին։

153 Թ. Մանսուր դրեց Հայաստանի վերայ Բակկար ի. Մուսլիմ Օքայլին կառավարիչ։

158 Թ. Հայաստանի կառավարիչը գրեց Մանսուրին, որ զօրքը խռովել է նորա դէմ, ջարդել գանձարանի դրանց փականքները եւ յափշտակել, ինչ որ այնտեղ կար. Մանսուր իւր պատասխանի մէջ Հետեւեալ դատաստանն արեց՝ թող մեր յանդիմանութեան արժանի կառավարիչը Հեռանայ պաշտօնից. եթէ դու խելօք լինէիր, զօրքը չէր խռովի, եւ եթէ դու թոյլ չդտանուէիր, նա չէր կողոպտէ գանձարանը։

163 Թ. ՄաՀդին դրեց իւր որդի Հարունին կուսակալ ամբողջ Մաղրիբի, Ատրպատականի եւ Հայաստանի վերայ, նշանակելով Հարկերի վերայ վերակացու Ջաբիտ ի. Մուսային, իսկ գործեր վարելու օգնական՝ ԵաՀեայ ի. Խալիդ ի. Բարմակին։

163 Թ. Աբդուլկաբիր ի. ԱբդուլՀամիդ ի. ԱբդուլռաՀման ի. Զէյդ ի. Խաթթաբ արշաւեց Հադաթի դռնից։[2] Նորա դէմ ելաւ Միքայէլ պատրիկը 9000 զօրքով, որի մէջ էր եւ Թազադ[3] Հայ իշխանը. Աբդուլկաբիր՝ զգալով իւր նուազութիւնն՝ խոյս տուեց կռւից եւ վերադարձաւ։ ՄաՀդին կամենում էր նորա գլուխը Հատանել,

---

1 Ըստ Jakut-ի Հալէբից ոչ Հեռի։

2 Թերեւս "Գուշան" անուան աղաւաղումն է։

1 Ջաֆարի օգնական փոխկառավարիչը։

2 Jakut կ'անուանէ բերդաքաղաք Մալաթիայի եւ Մարաշի մէջ։

3 Այլ ձեռագիր ունի Թարազ (طاراذ) ձեւը, որ թերեւս Թորոս անուան աղաւաղումն է։

digitised by A.R.A.R.@

բայց՝ զիջանելով նորա թախանձանքին՝ պահեց նորան բանտում։

172 թ. Հարուն Ռաշիդ յետ կոչեց Եզիդ ի. Մազեադին Հայաստանից եւ նորա տեղ դրեց Օբայդալլահ ի. Մահդիին։

176 թ. Հարուն նշանակեց Ֆադլ ի. Եահեային կուսակալ Ջաբալի, Տաբարիստանի, Դմբաւենդի, Կումիսի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։

182 թ. Ֆադլ ի. Եահեայ կնութեան առաւ խաքանի՝ Խազարաց թագաւորի՝ դուստրը, որը սակայն մեռաւ Պարտաւում։ Նոյն ժամանակ Հայաստանի կառավարիչն էր Սայիդ ի. Սալմ ի. Քոտայբայ Բահլի։

184 թ. Խազարք արշաւեցին խաքանի դստեր պատճառով Բաբ-էլ-աբւաբից, յարձակեցան (Հայաստանի սահմաններում ապրող) մուսլիմների եւ քրիստոնեաների վերայ եւ գերեցին նոցանից աւելի քան՝ ինչպէս պատմում են՝ 100.000 մարդ, երկրին հասուցանելով այնպիսի աղէտներ որոց նմանը իսլամութեան (պատմութեան) մէջ տակաւին լսած չէր։ Ռաշիդ դրեց Հայաստանի եւ Ատրպատականի վերայ Եզիդ ի. Մազեադին կառավարիչ, տալով նորան ուժեղ զօրք, իսկ Խուզայմայ ի. Խազիմին ուղարկեց Մծբին՝ Հայաստանի բնակիչներին օգնութեան։

185 թ. Եզիդ ի. Մազեադ վախճանեցաւ Պարտաւում։ Հարուն նշանակեց նորա տեղ Ասադ ի. Եզիդին։

205 թ. Մամուն ամիրապետը դրեց Խալդ ի. Մուհամմեդ ի. Աբուխալիդին կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ, որ պատերազմեցաւ Բաբեկի հետ։

209 թ. Մամուն նշանակեց Սադաքայ ի. Ալի Մարուֆ Բազուրաքին կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ, որ պատերազմեցաւ Բաբեկի հետ։

222 թ.[1] Օշին՝ իմանալով, որ Բաբեկ իւրայիններով փախել է (Հայաստան), տեղեկացրեց Հայոց իշխաններին եւ մեծամեծներին, թէ Բաբեկ փախստեամբ եկել է Հայաստանի գաւառներից մէկը, նոցա անմիջապէս կից, եւ հրամայեց նոցանից ամեն մէկին հսկել իւր գաւառի վերայ, չ'թողնել ոչ ոքի անցնել, այլ եկողին ձերբակալել եւ նորան տեղեկացնել այդ բանի մասին։ Բաբեկ մտաւ Հայոց լեռները, առանց ծանօթ լինելու տեղի հետ, մինչ բոլոր հայ իշխանները հսկում էին իրանց գաւառների ճանապարհների վերայ՝ եթէ մէկը անցնելու լինի, բռնեն նորան։ Սահլ ի. Սմբատ որ լեռներումն էր, (լուր առնելով Բաբեկի թագստեան տեղի մասին), շտապեց իւր զօրագնդով նորա մօտ եւ ասաց նորան՝ "Ե'կ ինձ հետ իմ ամրոցը, որ քեզ ապաստան կ'լինի, իսկ ես՝ քո ծառան. մնացիր այնտեղ քո ուղեկիցների հետ, ապա կ'մտածես քո անելիքը"։ Բաբեկ համաձայնեցաւ այն պայմանով, որ նա իւր եղբօրը ուղարկէ ի. Ստեփաննոսի ամրոցը, իսկ ինքն գնաց ի. Սմբատի հետ նորա ամրոցը։ Հետեւեալ առաւօտ Աբդուլլահ մտաւ ի. Ստեփաննոսի ամրոցը, իսկ Բաբեկ մնաց ի. Սմբատի մօտ։ Վերջինս իմացրեց Օշինին, թէ Բաբեկ գտնւում է նորա գղեակում ողջանդամ. Օշին ուղարկեց Աբու Սայիդին եւ Բուզբարին ի. Սմբատի մօտ, տալով նոցա մի նամակ առ նա եւ հրամայելով նոցա, որ յանձնեն այդ նամակը ի. Սմբատին տեղացիներից մէկի հետ եւ չ'հակառակեն նորա խորհրդին, որ նա նոցա կ'տայ։ Նոքա կատարեցին նորա հրամանը։

Ի. Սմբատ ասաց Բաբեկին՝. "Տեղս ախորժելի է, իսկ ամրոցի օդը քեզ համար ծանր է. գնանք առաւօտեան ժամին որսի"։ Բաբեկ պատասխանեց՝. "Եթէ քեզ հաճոյ է, պատրաստութիւն տես, որ առաւօտ գնանք"։ Ի. Սմբատ տեղեկացրեց Սայիդին եւ Բուզբարին իւր որոշման մասին եւ հրամայեց, որ նոցանից մէկը դարան մտնի լեռների այս ինչ տեղում, իսկ միւսը՝ այս ինչ տեղում՝ իրանց զօրագնդով։ Երբ ի. Սմբատ եւ Բաբեկ առաւօտեան գնացին (որսի), ի. Սմբատ ուղարկեց մի սուրհանդակ Սայիդի եւ մի այլ սուրհանդակ Բուզբարի մօտ, որոնք նոցա հետ միասին եկան այն տեղը, ուր գտնւում էին Բաբեկ եւ ի. Սմբատ, զննեցին Բաբեկին, ցած իջան եւ՝ պահելով մէկը նորա մի կողմը, միւսը՝ նորա միւս կողմը ձերբակալեցին նորան։

Իսկ Աբդուլլահ՝ Բաբեկի եղբայրը՝ գնաց Իսայ ի. Իւսուֆ ի. Ստեփաննոսի մօտ։ Երբ Օշին ձերբակալեց Բաբեկին եւ նորա մարդիկը, նա սկսեց պտրել Աբդուլլահի թագստեան տեղը եւ՝ իմանալով, որ նա ի. Ստեփաննոսի մօտ է, գրեց նորան, որ նա ուղարկէ Աբդուլլահին իւր մօտ։ Ի. Ստեփաննոս կատարեց նորա հրամանն, եւ Օշին բանտարկեց նորան Բաբեկի հետ մի տան մէջ, հրամայելով պահապաններին հսկել նոցա վերայ, իսկ ինքն տեղեկացրեց Մուտասիմ ամիրապետին եղելութեան մասին։

235 թ. Մուտավակկիլ յանձնեց իւր որդի Մուտազզին Խորասան, Տաբարիստան, Ռայ, Հայաստան, Ատրպատական եւ Ֆարս։

236 թ. Մեռաւ Աբու Սայիդ Մուհամմեդ ի. Իւսուֆ՝ Հայաստանի եւ Ատրպատականի կառավարիչը։ Մուտավակկիլ դրեց Իւսուֆին նորա հօր իշխած հպատակ երկրների վերայ, ապա նշանակելով նորան հարկերի եւ հողերի վերայ։ Իւսուֆ գնաց իւր գաւառը եւ սկսեց կառավարել, ուղարկելով իւր օգնականներին երկրի բոլոր մասերը։

## Հայերի յարձակումն Իւսուֆ ի. Մուհամմեդի վերայ:

Հայերի յարձակման պատճառը հետեւեալն էր։ Երբ Իւսուֆ գնաց Հայաստան իւր գաւառը, նորա մօտ եկաւ Բագրատ ի. Աշոտ, որ իշխանաց իշխան կը կոչւէր, եւ խնդրեց նորան՝ հաստատել նորան իշխանութեան մէջ. բայց Իւսուֆ ձերբակալեց նորան եւ կապանքների մէջ ուղարկեց ամիրապետի դուռը, ուր Բագրատ իւր որդու հետ ընդունեց իսլամութիւն։ Այն ժամանակ Բագրատ

[1] Այս ընդարձակ հատուածը թարգմանում եմ քաղուածօրէն, որչափ նա Հայոց պատմութեան հետ կապ ունի։

digitised by A.R.A.R.@

ի. Աշոտի եղբօր որդին եւ հայ իշխանք դաշն կապեցին Իւսուֆի դէմ:

Ձիւն իջաւ եւ ծածկեց Տարօն քաղաքը, ուր կը գտնուէր Իւսուֆ. երբ ձիւնը դադարեց, Հայերը բոլոր կողմերից եկան եւ պաշարեցին Իւսուֆին եւ նորա մարդիկը քաղաքում. Իւսուֆ գնաց քաղաքի դուռը եւ այնտեղ տեղի ունեցած կռւում սպանեցաւ իւր բոլոր ռազմիկներով հանդերձ: Նորան, ով կռւին չէր մասնակցում, Հայերը ասում էին՝. «հանիր զգեստդ եւ ապրիր մերկ»: Շատերը նոցանից հանեցին իրանց զգեստները եւ ապրեցան մերկ եւ բոբիկ, ոմանք մեռան ցրտից, ոմանց մատերը ընկան, եւ ապրեցան:

Երբ Իւսուֆ ուղարկեց Բագրատ ի. Աշոտին, հայ իշխանք դաշն կապեցին եւ երդուեցան արեամբ՝ սպանել Իւսուֆին. նոցա հետ համաձայնեցաւ եւ Մուսայ ի. Զուրար, որ ամուսնացած էր Բագրատի դստեր հետ: Իսկ Սաւադ ի. Աբդուլհամիդ Ջահհաֆին հակառակ էր, որ Իւսուֆ ի. Աբու Սայիդ այնտեղ մնայ եւ իմացրեց նորան իշխաններից նորան հասած լուրերի մասին. սակայն Իւսուֆ չանսաց: Ռամազան ամսին եկան Հայերը եւ պատեցին քաղաքի պարիսպները: Ձիւնը տասը կանգունի չափ կը ծածկէր քաղաքի բոլոր շրջակայքը, Խլաթ, Դուին եւ ամբողջ աշխարհը: Սորանից առաջ Իւսուֆ ուղարկել էր իւր մարդիկը իւր գաւառի գիւղերը. երբ սոքա խումբ խումբ ցրւած էին զանազան կողմեր, նոցա վերայ յարձակեցան հայ իշխանք խուժանի բազմութեան հետ եւ կոտորեցին նոցա մի օրւայ ընթացքում: Երբ Հայերը մի քանի օր շարունակ պաշարեցին քաղաքը, Իւսուֆ նոցա դէմ ելաւ եւ ճակատեցաւ, մինչեւ որ սպանեցաւ:

Մուտավակկիլ ուղարկեց Բուղայ Շարաբիին Հայաստան՝ Իւսուֆի արեան վրէժը գնելու համար. մտնելով Հայաստան Միջագետքից, նա նախ ձերբակալեց Արզնում Մուսայ ի. Զուրարին (նորա եղբայրներն էին՝ Իսմայէլ, Սուլէյման, Ահմեդ, Իսայ, Մուհամմեդ եւ Հարուն) եւ ուղարկեց նորան ամիրապետի դուռը. իսկ ինքն բանակեցաւ Խոյթի լեռներում: Խութեցիք Հայաստանի այն բնակիչներն են, որոնք սպանեցին Իւսուֆ ի. Մուհամմեդին. Բուղայ պատերազմեցաւ նոցա հետ, յաղթեց, սպանեց նոցանից 30.000, գերեց նոցանից մեծ բազմութիւն եւ բնակեցրեց Հայաստանի զանազան մասերում: Գալով Աղբակ գաւառը (որ Վասպուրականին կը պատկանի) նա գերեց Աղբակի իշխան Աշոտ ի. Համզայ Աբու Աբբասին եւ վերաշինեց Նախիջեւանը: Ապա եկաւ Դուին, ուր մի ամիս մնալուց յետոյ գնաց Տփղիս:

### *Բուղան յաղթում է Իսահակ ի. Իսմայէլին եւ այրում Տփղիս:[1]*

238 թ. շաբաթ օրը՝ առաջին Ռաբի ամսից 10 օր առաջ՝ Բուղան ուղարկեց Զիրակ Թուրքին, որ անցաւ Կուր գետը: Այս գետը Բաղդադի Սարայ գետի նման մեծ է եւ անցնում է քաղաքի միջից, այնպէս որ Տփղիս նորա արեւմտեան, իսկ Սուղդաբիլ՝ նորա արեւելեան կողմն է մնում: Բուղայ բանակեցաւ արեւելեան ափում. Զիրակ՝ անցնելով Կուրը՝ մտաւ Տփղիսի Մայդանը:[1] Քաղաքը ունի հինգ դուռ, որոնք են՝ Մայդանի դուռ, Հին դուռ, Փոքր դուռ, Միջին դուռ եւ Սուղդաբիլի դուռ. Բուղան ապա ուղարկեց քրիստոնեայ Աբու Աբբաս Վաղիին[2] հայ բնակիչների մէջ ապրող արաբների եւ պարսիկների մօտ. երբ Զիրակ հասաւ Մայդանի մօտ, իսկ Աբու Աբբաս՝ Միջին դուռը, Իսահակ ի. Իսմայէլ եկաւ Զիրակին ընդդէմ եւ կռւի հրաւիրեց նորան. Բուղան բարձրացաւ մի բլուրի վերայ, որ քաղաքի հանդէպ Սուղդաբիլի մօտ կը գտնուէր, տեսնելու համար, թէ ինչ են անելու Զիրակ եւ Աբու Աբբաս. ապա նա ուղարկեց նաֆթակիրներ, որոնք՝ վառելով կուպրը՝ նետեցին քաղաքի մէջ. կուպրից քամին սաստկացաւ: Իսահակ ի. Իսմայէլ վերադարձաւ քաղաք տեսնելու հրդեհը, որ պատել էր նորա պալատը եւ շրջակայ շինութիւնները. այն ժամանակ նորա վերայ յարձակեցան Թուրքերը եւ Մուղարիբացիք (Ափրիկեցիք), գերեցին նորան իւր որդի Օմարի հետ եւ բերեցին Բուղայի մօտ, որ հրամայեց տանել նորան եւ կապանքների մէջ գլխատել Հասակ դռան հանդէպ.[3] Նորա գլուխը բերեցին Բուղային եւ ապա դրեցին Հասակ դռան վերայ, իսկ մարմինը նետեցին Կուր գետը: Նա մի ծերունի էր փոքր հասակով, դէր, մեծ գլխով, որ կը ներկէր մուգադոյն հինայով. Նորա գլխատման վերահսկողն էր Ղամեշ, Բուղայի փոխանորդը: Քաղաքում այրւեցան մօտ 5000 մարդ, որովհետեւ հրդեհը կուպրի անդադար վառւելուց օր եւ գիշեր կը շարունակւէր: Առաւօտեան եկան Մուղարիբացիք եւ դուրս բերեցին, ով դեռ կենդանի էր, իսկ մեռածների հանդերձները հանեցին: Իսահակի կինը, որ Սարիրի իշխանի դուստրն էր, մնացել էր Սուղդաբիլում, որ Տփղիսի արեւելեան կողմն է գտնւում: Այս քաղաքը շինել է Անուշիրուան թագաւորը, իսկ Իսահակ ամրացրել էր, նորա շուրջը փոս փորել եւ քաղաքի մէջ դրել Խութեցիներից եւ այլոց պահակ զօրք: Բուղան շնորհեց բնակիչներին ներումն այն պայմանով, որ նոքա իրանց զէնքերը վայր դնեն եւ գնան, ուր կամենան:

Ապա Բուղան ուղարկեց Զիրակին բազմաթիւ զօրքով Գարդմանի ամրոցը (որ գտնւում է Տփղիսի եւ Պարտաւի մէջ). Զիրակ առաւ ամրոցը, գերեց նորա իշխան Կտրիճին[4] եւ բերեց

---

1 Հմմտ. Թովմայ Արծրունի, հրատ. Ք. Պատկանեանի, Պետերբուրգ, 1887, էջ 172—175:

1 Նոյն Մայդանը՝ Կուր գետին կից՝ բաժանում է ներկայումս հայ եւ թուրք թաղերը քաղաքի հարաւ-արեւելեան մասում:

2 Այլ օրինակներ ունին՝ Վարազի կամ Վարժի, Վարատի, Քարազի (الوارني، الوارتي، القارني): Ըստ մեր պատմագրի՝ Աբու Աբբաս նոյն անձնաւորութիւնն է, որ հատուածիս վերջում յիշւում է Սմբատ ի. Աշոտ անւամբ:

3 Ըստ Թովմայ Արծրունւոյ՝ Սահակ որդի Իսմայէլի ինքն իւր կամօք գնաց Բուղայի մօտ Ժիրաքի առաջնորդութեամբ:

4 Բնագրում՝ Քիրիճ (قرطج):

digitised by A.R.A.R.@

նորան (գլխաւոր) բանակը։ Ինքն Բուղան արշաւեց Իսայ ի. Իւսուփի, Ստեփաննոսի քրոջ որդու վերայ, որ գտանւում էր Փայտակարանի Քեթիշ[1] ամրոցում (Նորա եւ Փայտակարանի մէջ տասը, իսկ Նորա եւ Պարտաւի մէջ յիսուն փարսախ է). Բուղան պատերազմեցաւ իշխանի հետ, առաւ ամրոցը, ձերբակալեց եւ գերեց նորան, նորա որդուն, հօրը, եւս Աբու Աբբաս Վաղիին, որի անունն էր Սմբատ ի. Աշոտ, նորա հետ միասին Ագուանից իշխան Մուաւիայ ի. Սահլ ի. Սմբատին, նաեւ Ատրներսեհ ի. Իսահակ Խաչանիին։

238, 239, 240 թթ. Ալի ի. Եահեայ հայը արշաւեց Յունաց վերայ։

248 թ. Ալի ի. Եահեայ վերադարձաւ Ասորիքի սահմանագլխից եւ նշանակեցաւ կառավարիչ Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։

249 թ. Օմար ի. Օբայդալլահի սպանումից յետոյ Յոյները եկան Միջագետքի սահմանագլուխը, բաղձալով խլել այստեղ գտանւող մուսլիմների հողերը։ Առնելով այս լուրը՝ Ալի ի. Եահեայ (որ Հայաստանից եկել էր Մարտիրոսաց քաղաքը) նոցա դէմ ելաւ քաղաքի եւ Սալսալայի բնակիչների բազմութեան հետ եւ նահատակեցաւ մօտ 400 մարդու հետ ռամազան ամսին։

251 թ. Ալայ ի. Ահմեդ՝ Բուղայ Շարաբիի օգնականն՝ զեկուցում գրեց Հայաստանի հարկերի եւ հողերի մասին, պատմելով, ինչ որ պատահել էր (նորա) երկու հարկահանների հետ այս գաւառը շրջելիս, որոնց անունները նա յիշեց. ժողովուրդը յարձակեցաւ նոցա վերայ, այնպէս որ նոքա ստիպուած եղան մտնել մի ամրոց. բայց ամբոխը դրեց նորա առջեւ մաղանի, եւ սկսեց նեղել. հարկահանները դուրս եկան ամրոցից փախստեամբ եւ յայտնի չէ, թէ ինչ եղան. իսկ ամրոցը մնաց ապստամբների ձեռքում։

257 թ. Մութամիդ ամիրապետը պատգամաւորներ ուղարկեց Իսայ ի. Շայխի մօտ, առաջարկելով նորան հանգիստ կերպով հեռանալ Ասորիքից եւ ստանձնել Հայաստանի վարչութիւնը։ Իսայ ի. Շայխ համաձայնեցաւ եւ գնաց Ասորիքից Հայաստան։

260 թ. սպանեցաւ Ալայ ի. Ահմեդ Ատրպատականում։

285 թ. Մութադիդ ամիրապետը դրեց Մուհամմեդ ի. Աբու Սաջին կառավարիչ Ատրպատականի եւ Հայաստանի վերայ։

Բ. ԽԱԼԱԹԵԱՆՑ

[1] Բնագրի կէտադրութիւնն անշուշտ սխալ է. փոխանակ «կաշիշ» (كشيش) կարդալու է «կեթիշ» (كشيش). Համմ. Թովմայ Արծրունի էջ 178 (Քեթիշ)։

# ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

## ԱԿՆԱՐԿ ՄԸ ՀՆՈՒԹԵԱՆ ԲԵԿՈՐՆԵՐՈՒ

### Ա.

Մինչ եօթը տարի յառաջ Այտընի Հայոց նախկին գաղութին ծագումը կը հետազօտէինք, իրենց ունեցած այժմեան եկեղեցւոյ նկատմամբ կը գրէինք այսպէս, «Նոր եկեղեցւոյս հիմերն եւ պատերը, կանանց վերնատունն ըլլալու՝ թէ՛ պարտէզին մէջ գտնուած սանդուխին աստիճանները եւ թէ՛ եկեղեցւոյ մէջ գտնուած սանդուխի աստիճանները շինուած են հին գերեզմանաքարերով[1]»։ Ժամանակը մեր այս տողերը կրկնապէս ապացուցած է այսօր։ Բնութեան սոսկալի հարուածն՝ երկրաշարժը 1899ին Սեպ. 20ի գիշերն երբ Այտընի բնակչաց սրտերը դող կը հանէր եւ իւր անդադար ցնցումներով կը ստիպէր ահաբեկեալ ժողովուրդը քանի մ՚օր բացօթեայ վրաններու տակ անցընել, Էջմիածնական Հայոց Ս. Աստուածածին Եկեղեցւոյ քարուկիր եւ հաստատուն շէնքն ալ ցնցելով՝ անոր չորս պատերուն վրայ ճեղքեր կը բանար կը թողուր։ Յիշենք փակագծի մէջ որ նոյն տարւոյ շարժը Նազիլլի՝ Տէնիզլի՝ Սարաքէօյ քաղաքներուն եւ անոնց մերձակայ գիւղերուն շէնքերուն եւս ծանր վնաս հասցուցած եւ տեղ տեղ փլատակաց տակ թաղած էր բաւական թուով անձինքներ եւ շատերու սրտին մէջ տխուր յիշատակներ թողուցած էր։ Այսպէս եթէ Այտընի եկեղեցւոյ պատերուն վրայ բացուած ճեղքերու առաջքն չառնուէր, բնականաբար ապագային բնութեան նոր պատահար մը կործանման պիտի ենթարկէր Այտընցւոյն ունեցած տաճարը։ Դրամի պակասութեան պատճառաւ Այտընի հայ ժողովուրդը չէր կրցած ընել իսկոյն կարեւոր նորոգութիւնը, սակայն նոյն ժամանակի միջոցին մէջ տեղւոյն եւ մերձակայ քաղաքաց ազգայիններէ պէտք եղած դրամը հաւաքել յաջողելով, հազիւ տարւոյս Յունիսի մէջ սկսած էր նորոգութեան ձեռք զարնել։

Նորոգութեան կամ լաւ եւս ըսենք՝ բացուած ծերպերն իրարու միացընելու համար, արտաքուստ որմերն երկայնութեան երեք կարգ երկաթի հաստ ձողերով իրարու կապել հարկ տեսնուած էր։ Ուստի նոյն ձողերը զետեղելու համար որմերուն թանձր ծեփերը տեղ տեղ երկայնութեան վար կ՚առնուին եւ ահա երեւան

[1] Հայք ի Զմիւռնիա եւ ի Շրջակայս, Հատոր Բ. էջ 11։ Տպագր. Վիեննա 1899։

digitised by A.R.A.R.@